ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր
հեռ. 099-00-03-02

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբեր 2015 թվականի N 20

ԿԱԹՆԱՋՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ, 20-րդ, 32-րդ հոդվածի 12-րդ կետերով, հաշվի առնելով Կաթնաջրի «Ս. Սեյրանյան»-ի անվան միջնակարգ դպրոցի տնօրենի 01.09.2015թ.-ի գրությունը Կաթնաջրի համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 1 փողոց 2 փակուղի թիվ 5/1 հասցեում գտնվող 39715,0 հազար դրամ գնահատված արժեքով 216,97 ք.մ. ընդհանուր մակերեսով շենքն ու 8,81ք.մ. մակերեսով ցանկապատը և դրանց սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ 0,12 հա հողատարածքը (այսուհետ՝ գույք), ինչպես նաև նշված շենքի համար ձեռք բերված Կաթնաջրի գյուղապետարանի հաշվեկշռում առկա հիմնական միջոցները (հավելված 1) անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով հանձնել ՀՀ Լոռու մարզի Կաթնաջրի «Ս. Սեյրանյանի» անվան միջնակարգ դպրոցին, դպրոցում գործող նախակրթարանի գործունեությունն իրականացնելու նպատակով:

2. Կաթնաջրի համայնքի ղեկավարին՝
   Մեկամսյա ժամկետում Կաթնաջրի «Ս. Սեյրանյան»-ի անվան միջնակարգ դպրոցի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, դրանում սահմանելով որ պայմանագրից բխող գույքային իրավունքների պետական գրանցումը ենթակա է իրականացման համայնքի միջոցների հաշվին:

3. Նախակրթարանի բնականոն գործունեության ապահովման նպատակով համայնքի 2015թ.-ի բյուջեի 09/01/01/51 դասակարգման 4637 հոդվածից Կաթնաջրի «Ս. Սեյրանյան»-ի անվան միջնակարգ դպրոցին հատկացնել 1000000 (մեկ միլիոն) դրամ:
4. Կաթնաջրի համայնքի ղեկավարին՝
Կաթնաջրի «Ս. Սեյրանյան»-ի անվան միջնակարգ դպրոցի հետ կնքել սույն որոշման 3-րդ կետում նշված գումարի տրամադրման պայմանագիր, հատկացված գումարը բացառապես նախակրթարանի գործունեությանն ուղղված ծախսերը հոգալու պայմանով:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Թորոսյան Մերուժան			
Մանուկյան Սմբատ			
Պապոյան Մանվել			
Սարգսյան Սամվել			
Սիմոնյան Գագիկ			

Կաթնաջուր համայնքի ղեկավար՝ _____ Արմեն Պապոյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)